

**ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԼԻԼԻԹԸ» ՀԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՈՒ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Ադամ, Եվա, «Ծննդոց գիրք», դրախտ, երկիր, օձ, արևելյան ավանդազրույցներ, մազեր, արգելված պտուղ, լեզենդ, Ֆաուստ:

Ключевые слова и выражения: Адам, Ева, “Книга Бытие”, рай, Земля, змея, восточные придания, волосы, запретный плод, легенда, Фауст.

Key words and expressions: Adam, Eve, “Book of Genesis”, paradise, earth, serpent, eastern legends, hair, fruit, myth, Faustus.

Հին դիցաբանական հավատալիքների ամենաբազմաշերտ և հակասական կերպարներից է Լիլիթը, ով համաշխարհային գրականության մեջ ստեղծագործական վերամեկնաբանումների երկար ճանապարհ է անցել:

Հին եբրայական պատմությունների ընդհանրացմամբ եբրայական հանրագիտարանում Լիլիթը անվանվում է գիշերային աստվածուհի: Ինչպես նշում են հետազոտողները, լեզվական առումով ստուգաբանորեն կապված է գիշեր կամ քամի բառերի հետ: Ինչպես կտեսնենք, Իսահակյանի մոտ Լիլիթին բնորոշող երկու հատկանիշներն են քամու պես սլանալը և գիշերները խորհրդավոր անհայտանալը Ադամի մոտից¹:

Թալմուդական բնագրերում նա երկարամազ ու թևավոր կին է ներկայացվում: Հավատալիքային այս ըմբռնումների հիման վրա միջնադարում համարվում էր գայթակղիչ կին երկար մազերով: Գիշերային մի դև, որ թռչում էր տարբեր կողմեր:

Վերածնության շրջանում Լիլիթը իբրև Ադամի առաջին կին, որը դուրս է գալիս դրախտից, սկսում է ընկալվել որպես չքնաղ գեղեցկությամբ վերերկրային մի էակ, այսպես «մուտք գործելով» նոր շրջանի եվրոպական, այդ թվում նաև ռուս գրականություն²:

17-18-րդ դարերից եվրոպական գրականության մեջ Լիլիթի կերպարին դիմող հեղինակները աշխատում են ընդգծել նրա

¹ Еврейская Энциклопедія. Т. 10-ый, С. Петербург, стр. 206.

² Мифы народов мира, т. 2-й, Москва, 1982, стр. 55.

բազմաշերտության ու հակասականության այս կամ այն հատկանիշը ու դրսևորումը: Նկատելի է, որ գրականության զարգացման ընթացքը Լիլիթին աստիճանաբար ձեռքագատում է հին աշխարհից մինչև միջնադարյան կաթալիստական ըմբռնումները հասնող ծիսա-հավատալիքային ու հմայական շերտից, վերածելով նրան կանացի մշտահմա մի կերպարի, ուր տղամարդկանց տանջելն իսկ ավելի շատ կապվում է նրա կանացի հմայքի և ոչ թե դիվային բնության հետ:

«Լիլիթի» և նրա նախատիպերի համեմատությունն սկսենք Ավ Իսահակյանի հետևյալ բնորոշմամբ. «Լիլիթը կարծես միլիոն տարիներ քարացել է սաթի մեջ և հիմա նորից կենդանանում է Իսահակյանի գրչի տակ: Նա երևում է ինչպես երազային տեսիլք, որի պատկերը, զգացողությունը միշտ եղել է մեր անուրջներում և հիմա կենդանանում է մեր առջև: Եվ կամա թե ակամա գերվում ու զմայլվում ես Իսահակյանի արվեստի կախարդությամբ»³:

Նման բյուրեղացումը Իսահակյանը կատարել է բազմաստիճան ընթացքով՝ այդպիսի խտացման հասնելով լեգենդի եռաստիճան մշակման երեք տարբերակներով: Երրորդ կամ վերջնական տարբերակը տեղ է գտել Վարպետի 1950-ական թվականներից սկսած բոլոր հրատարակություններում, հասնելով գեղարվեստական ընդհանրացման: Այդ ճանապարհին դուրս են մնացել մի շարք մանրամասներ ու հատվածներ, որոնցում ավելի ցայտուն է երևում կապը Լիլիթի սկզբնաղբյուրների ու նրա նախնական բնույթի հետ: Ասվածը վերաբերում է նաև Լիլիթին վերաբերող գրառումներին: Այս պատճառով «Լիլիթի» ընդունված վերջին տարբերակը կհամեմատենք նախորդ երկուսի և հիշյալ գրառումների հետ:

«Լիլիթը» Իսահակյանը ենթավերնագրում անվանել է «Արևելյան առասպել» ընդգծելով համապատասխան գրական նախօրինակ ունենալը:

«Ծննդոց գրքի» առաջին գլուխը և երկրորդ գլխի 1-7-րդ տողերը խտացրել է հետևյալ պարբերության մեջ. «Աստված՝ երկինք ու երկիր և բոլոր կենդանիներն ու բույսերը Իր արարչական մի սոսկ խոսքով ստեղծելուց հետո առավ անասունների ոտքի տակ ընկած հողից մի կտոր և նրանից ստեղծեց մարդուն»⁴:

«Ծննդոց գրքի» առաջին գլխում յուրաքանչյուր օրվա համար նշվում է, թե Աստված տվյալ օրը կատարվելիք արարման համար ինչ է ասում, որի

³ Իսահակյան Ավ., Բարև Վարպետ, Երևան, 2008, էջ 302:

⁴ Իսահակյան Ավ., Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հտ. 5-րդ, Երևան, 2014, էջ 178:

համար վեց օրերից յուրաքանչյուրն սկսվում է «Եւ ասաց Աստուած» խոսքերով: Արարչագործությունը, սակայն, Իսահակյանը դիտելով որպես Աստծո միասնական ծրագիր և չցանկանալով ամեն օրվա արածը նկարագրելով ծանրացնել լեզենդի մուտքը, գրում է, որ արարչական մեկ խոսքով արարեց ամենը: Այստեղ «Ծննդոց գրքի» մարդու արարմանը վերաբերող մի էական տարբերություն կա: Աստվածաշնչում ասվում է, որ Աստված ստեղծեց «զմարդն հող յերկրէ. Եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի, եւ եղև մարդն յոգի կենդանի» (Ծննդ. Բ 7-8):

Մայր հողին միախառնված աստվածային արարչագործ շնչի փոխարեն Իսահակյանը պարզապես գրում է, որ Ադամը ստեղծվեց անասունների ոտքի տակ ընկած հողից: Մարդու հողեղեն բնույթի գիտակցված ավելի հասարակացումը Վարպետը կատարում է առավել ընդգծելու ստեղծագործության հիմքում ընկած կոնֆլիկտը, որը կառուցվում է Ադամի հողեղենության և Լիլիթի հրեղեն բնույթի հիման վրա:

Ինչպես որ միջնադարյան մեկնություններում է ասվում, թե մարդը Արարչության շարունակական փառաբանությունն է, այնպես և Իսահակյանն է գրում Ադամի ստեղծման մասին. «Ստեղծեց նրան, որ սա սքանչանա Իր վեհ գործերի վրա և փառավորե աստվածային անունը»:

Ադամին դրախտում դնելու մասին «Ծննդոց գրքում» ասվում է. «Եւ տնկեաց Աստուած գդրախտն յԵդեմ ընդ արեւելս, եւ եղ անդ զմարդն, զոր ստեղծ» (Ծննդ. Բ 8-9): Բառացի նույն հետևողությամբ Իսահակյանն է գրում. «Եվ բնակավայր տվեց նրան Եդեմի դրախտը: Նորաստեղծ Ադամը հիացավ Աստծու հրաշալիքների վրա»: Ադամը փառաբանում է Աստծո արարչագործությունը: Վերջնական բնագրում և տարբերակներում մի նրբին, բայց և կարևոր տարբերություն կա: Առաջին և երկրորդ տարբերակներում ասվում է, որ Ադամը «զարմացավ և փառաբանեց **մեծ վարդապետի անունը**»: Վերջնական տարբերակում ասվում է «**մեծ վարպետի անունը**», որով Աստծուն տրված բնորոշումը որոշակիորեն աշխարհականացել է: «Մեծ վարդապետը» գալիս է եբրայական «Ռաբբի»-վարդապետ անվանումից և ավելի ընդգծված է կապվում եբրայական ավանդության հետ: Վերջին տարբերակում այն ավելի ընդհանրական բնույթ ունի: Աստված որպես մի վարպետ է արարում երկինքն ու երկիրը:

Այս հատվածում Իսահակյանը հետևել է «Ծննդոց գրքի» երկրորդ գլխի ընթացքին մինչև կնոջ ստեղծումը: Ադամի մի կողից ստեղծված Եվայի փոխարեն ինչպես որ հին եբրայական ավանդությունում է, ստեղծվում է հրեղեն Լիլիթը. «Եվ բռնեց դեպի վեր սուրացող կրակը և նրա բեկբեկուն, ճախրող բոցերից ստեղծեց անդրանիկ կնոջը՝ Լիլիթին»: Ոչ թե պարզապես կրակից, այլ վեր սուրացող կրակից է ստեղծում Լիլիթին, ավելի ընդգծելու համար Ադամի հետ նրա բնության հակադրությունը:

Արարչագործության վեց օրերից յուրաքանչյուրի վերջում ասվում է. «Եւ ետես Աստուած զի բարի է» (Ա 19): Այս խոսքերը Բսահակյանը ներկայացնում է որպէս Լիլիթի համար ասված:

Եվ նայելով իր ստեղծածի վրա՝ հիացած ասաց. «Բարի է, որովհետև գեղեցիկ է»:

Նման մեկնաբանությամբ բարին գեղեցիկն է: Այս նախադասության չափերտների մեջ վերցնելը ակնարկում է, որ դրանք մի սկզբնաղբյուր ունեն, որը «Ծննդոց գիրքն» է:

Հաջորդող շարադրանքում Լիլիթի համար են ասվում Եվային վերաբերող աստվածային մաղթանք-պատգամի նշանավոր խոսքերը՝ հետևյալ վերաշարադրմամբ. «Աղա՛մ, ահա քեզ ընկեր՝ գեղեցիկ Լիլիթը: Իրար աչքերի մեջ տեսեք ձեր պատկերը և իրար սրտերի մեջ սիրեցեք միմյանց: Աճեցե՛ք և բազմացե՛ք»:

Այստեղ իրար միահյուսված են ներկայացվել՝ «Արասցուք դմա օգնական» (Ծննդ. Բ 19), «Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր Իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա» (Ա 27), «Միրեցեք զմիմեանս» Ավետարանից եկող խոսքերը և «Աճեցե՛ք եւ բազմացարուք եւ լցե՛ք գերկիր, եւ տիրեցե՛ք դմա» (Ա 28) խոսքերը Լիլիթի հետ կապված իսահակյանական վերամեկնաբանմամբ:

Եվային ստեղծելուց հետո տղամարդու՝ կնոջը հետևելու մասին «Թողե՛ այր զհայր իւր եւ զմայր իւր, եւ երթիցե՛ զհետ կնոջ իւրոյ» (Բ 24) և Եվայի համար ասված «Առ այր քո դարձ քո, եւ նա տիրեսցե՛ քեզ» (Քո ամուսնուն պիտի ենթարկվես, և նա պիտի իշխի քեզ վրա. Գ 16) խոսքերի վարպետ միահյուսմամբ Բսահակյանը գրում է. «Աղա՛մ, քո բոլոր օրերիդ մեջ հետևիր Լիլիթին, և դո՛ւ, Լիլիթ, հնազանդ եղիր Աղամին»:

Համաշխարհային գրականության մեջ Լիլիթի գրական կերպավորմանը Բսահակյանի «Լիլիթի» շրջանակում անդրադարձել են Կ. Գրիգորյանը և Ավ. Բսահակյանը: Կ. Գրիգորյանը ներկայացնում է նաև նոր շրջանի եվրոպական և ռուսական գրականության մեջ Լիլիթին նվիրված ստեղծագործությունների մատենագիտական հանգամանալից թվարկումը⁵:

Ավ. Բսահակյանը Լիլիթի համաշխարհային գրականության մեջ անդրադարձը դիտարկելով Վարպետի համանուն ստեղծագործության համատեքստում, գրում է. «Լիլիթի կերպարի ռոմանտիկ խորհրդավորությունը՝ «հավերժական կնոջ» բանաստեղծական սիմվոլիկան, իր վրա է սևեռել տարբեր ժամանակների ստեղծագործողների ուշադրությունը: Բսահակյանի արխիվային նյութերից՝ օրագրերից,

⁵ Տե՛ս Григорян К., Творческий путь Аветика Исаакяна, Ереван, 1975, стр. 87-107.

ծոցատետրերից մեզ հայտնի է դառնում, որ նա խորապես ծանոթ է եղել այդ գրականությանը, մանրագնին կերպով ուսումնասիրել է Լիլիթի տարբեր մեկնաբանությունները, նրա շուրջ եղած լեգենդները, պատմվածքները, բանաստեղծությունները»⁶:

Վերլուծելով Լիլիթի կերպարը մի շարք ստեղծագործություններում, որպես ընդհանրացում Ավ. Բսահակյանը գրում է. «Լիլիթի կերպարը հիմնականում դիտվում է որպես գայթակղության խորհրդանիշ-դև-կին, հեռու մարդկային բնությունից, մարդկային զգացմունքներից»⁷:

Հետագոտողը նշում է, որ հիշյալ մեկնաբանություններից որոշակիորեն տարբերվում է ռուս սիմվոլիստ բանաստեղծ Ֆեոդոր Սոլոգուբը, ում ստեղծագործություններում «Երևան է գալիս քնարական, «անորսալի» կախարդուհու կերպարը»: Լիլիթին նվիրված նրա բանաստեղծական շարքում, որի քնարական հերոսը Ադամն է, «Волшебница Лилит» բանաստեղծության մեջ նկատելի է դրախտի ջինջ պայծառության մեջ Ադամին հայտնվող հրաշեկ Լիլիթի շունչը:

Լիլիթի դիցաբանական կերպարը գրական վերամեկնաբանումների բարդ, դժվարին ու հակասական ճանապարհ անցնելով ասես գալու էր մարմնավորվելու Բսահակյանի «Լիլիթում», որպես կանացի նախասկզբի ու անորսալիության արտահայտություն:

Մ.Մկրյանը Բսահակյանի այս թեմային դիմելը բացատրում է նաև հետևյալ հանգամանքով. «1900-ական թվականներին հայ գրականության մեջ եղավ մի շրջան, երբ մեր մի շարք գրողներ (որոնց թվում և Շանթը) կարծեք թե իրար հետ մրցելով, ավելի շուտ վիճելով, հարկ համարեցին գրել «կին» թեմայով պատմվածքներ կամ վիպակներ, նույնիսկ պոեմներ, բայց պիտի ասել, որ նրանք կանացի էության բացահայտման ու բարոյական-հոգեբանական գնահատման հարցում սովորաբար դրսևորում էին որոշակի անկումայնություն՝ գոեհկաբանություն և էրոտիզմ: Բսահակյանի արձակ պոեմը, որը գրված է 1921 թվին, իր բովանդակության վեհությամբ ու բանաստեղծականությամբ այդ բոլորի հակապատկերն է ու ժխտումը»⁸:

Կ. Գրիգորյանը գրում է, որ «Լիլիթը» գրության ժամանակի առումով համընկավ արևմտաեվրոպական գրականության մեջ նեոռեալիզմի հոսանքի տարածման հետ: Դեռևս 19-րդ դարավերջին սիմվոլիստների մոտ նկատվում է շեշտված հետաքրքրություն գաղտնի-հանելուկային և

⁶ Բսահակյան Ավ., «Լիլիթը»՝ «Բարև Վարպետ» գրքում, Երևան, 2008, էջ 306:

⁷ Նույն տեղում, էջ 307:

⁸ Մկրյան Մ., Բսահակյանի հումանիզմը, Երևան, 1975, էջ 105-106:

դիվական կերպարների հանդեպ ու նորովի են իմաստավորվում հին և միջնադարյան ավանդական սյուժեները⁹:

Իսահակյանի՝ Լիլիթին դիմելը, սակայն գրականագետը բացատրում է ոչ թե մարդու ներսում եղած տարերային մութ ուժերի ազդեցության մասին ժամանակի տարածված թեմաներով, այլ դևի Լերմոնտովից եկող ընկալմամբ: «Мой демон» բանաստեղծության մեջ ասվում է.

И ум мой озарять он сможет

Лучом чудесного огня.

Ըստ Գրիգորյանի Իսահակյանի հերոսի՝ Ադամի կյանքը ևս լուսավորվում է կախարդական այդ կրակով: Նաև ըստ նրա Իսահակյանի «Լիլիթը» հիշեցնում է Լերմոնտովի նույնաբնույթ Թամարային, ում մասին բանաստեղծը գրում է.

Прекрасна, как ангел небесный,

Как демон, коварна и и зла...

Գրիգորյանը վկայակոչում է նաև այս հերոսուհու մասին Բելինսկու խոսքերը, որում նրան համեմատում է հին հունական սիրենների, ինչպես նաև ջրահարսերի հետ, որոնց «չի կարելի սիրել, չի կարելի և ատել, բայց նրան կարելի է միաժամանակ և՛ սիրել և՛ ատել»¹⁰:

Տեսանք, որ թալմուդական ավանդություններում Լիլիթի երկու բնորոշ հատկանիշներն էին սրընթաց թռչելը և գեղեցիկ ու երկար մազեր ունենալը: Իսահակյանը Ադամի հողեղենությունը և Լիլիթի հրեղենության հակադրությունն արտահայտում է առաջին հերթին Լիլիթի թռչելով սլանալու միջոցով, որ Ադամը շարունակ հուսահատվում է՝ չկարողանալով հասնել Լիլիթին:

Վարպետը Լիլիթին վերաբերող հին աղբյուրների հետևողությամբ է որպես նրա գեղեցկության կարևոր հատկանիշ նշում երկար մազերը, որոնք տարածվելով թիկունքից նրա մարմինն առավել գրավիչ են դարձնում:

Լիլիթը իր վարսերի կախարդող հմայքով է հիշվում նաև Գյոթեի «Ֆաուստի» Վալպուրգյան գիշերվա նշանավոր տեսարանում: Ֆաուստը Մեֆիստոֆելին հարցնում է, թե ով է այնտեղ գտնվում: Մեֆիստոֆելը ասում է, որ Լիլիթն է: Ի պատասխան Ֆաուստի հարցի, թե Լիլիթն ո՞վ է, Մեֆիստոֆելը ասում է, որ Ադամի առաջին կինն է: Նա զգուշացնում է Ֆաուստին չդիպչել Լիլիթի վարսերին, որովհետև այդ վարսերն են նրա

⁹ Григорян К., Творческий путь Аветика Исаакяна, стр. 104:

¹⁰ Նույն տեղում, էջ 105-106: См. u նաև Белинский В. Г., Полное собрание сочинений, т. IV, стр. 226:

միակ զարդարանքը: Ով դիպչում է Լիլիթի մազերին, կապվում է և այլևս չի կարող հեռանալ նրանից¹¹:

Լեզենդի առաջին տարբերակում Ադամը մի ձոն է ուղղում Լիլիթի մազերին: Իրար հաջորդող հինգ պարբերություններում նա շարունակ դիմում և ներբողում է Լիլիթի մազերը (էջ 706-707):

Առաջին պարբերության մեջ կախարդանքի նույն ուժով Ադամն է ասում.

-Ես սիրում եմ քո մազերը, քո անուշաբույր մազերը անպարտելի հրապույրների ցանց են հյուսել: Քո մազերը ցանցել են սիրտս:

Կախարդելու յուրօրինակ ծիսական արտահայտություն է հիշեցնում վերջին պարբերությունը. «Եվ բյուր փափագով համբուրեց Լիլիթի մազերը և համբուրեց մազերն ու աչքերին քսեց Լիլիթի մազերը»:

Այնպես որ լեզենդի հին բնագրերի դիվական հատկանիշները գեղեցկության շղարշով են պատվել Վարպետի գրչի ներքո, համահունչ պատկերի նորովի կերտմանը:

Իսահակյանի գրիչը գեղարվեստական սլացքի նոր բարձունքներ է արձանագրում դրախտի նկարագրության հատվածներում: Դրախտի առաջին նկարագրությունը գտնում ենք «Ծննդոց գրքում», ուր ասվում է «Եւ բուսոյց եւս տէր Աստուած յերկրէ զամենայն ծառ գեղեցիկ ի տեսանել եւ քաղցր ի կերակուր» (Բ 9): Հետևաբար դրախտի ծառերը ունեն գեղեցիկ և քաղցր պտուղներ:

Դրախտը նկարագրվում է միջնադարյան շատ ստեղծագործություններում: Անգամ հայտնի էին «Ադամգիրք» կամ «Դրախտագիրք» անվամբ մի շարք հայ միջնադարյան ստեղծագործություններ, որոնց ծավալային և գեղարվեստական առումով բարձրակետը դարձավ Առաքել Սյունեցու «Ադամգիրքը»: Եվրոպական վերածնության գրականության մեջ դրախտի նկարագրության բարձրակետն է Միլտոնի «Դրախտ կորուսյալ» ստեղծագործությունը:

Հայ միջնադարյան դրախտերգությունից իսահակյանական նկարագրությունների հատվածներն ունեն մի էական տարբերություն: Միջնադարյան ստեղծագործություններում, այդ թվում և Սյունեցու, դրախտը հանգում է Ադամին ծառայելուն և ըստ այդմ հողեղեն է:

Նման ըմբռնումն իր լավագույն արտահայտությունն է գտել Սյունեցու հետևյալ տողերում.

***Էստեղծ և գղրախտըն բարձրագոյն,
Ծառս և ծաղկունս ի նմա անհուն:***

¹¹ Гете, Собрание сочинений в тринадцати томах, т. V, Москва, 1947, стр. 231:

*Պէս պէս կերպիւ լուսափայլուն՝
Զի բնակութիւն լիցի մարդոյն¹²:*

Հետևաբար դրախտն իր ողջ վայելչությամբ պետք է ծառայեր Ադամին:

Հայ միջնադարյան բանաստեղծների նկարագրած դրախտը նույն երկրային բնությունն է օժտված գերադրական աստիճանի բնորոշումներով: Կան բնորոշումներ, բայց ոչ պատկերներ: Բնության մեջ մարդկային աչքի տեսածից դուրս չկա որևէ այլ անձանոթ պատկեր:

Դրախտի նկարագրության Սյունեցու լավագույն հատվածը թերևս հետևյալ քառատողն է.

*Այն ի՛նչ ծաղկունք էր անթառամ,
Որ ի դրախտին միջին բուսան,
Գոյնքըն փայլի տայր զանազան
Զերդ ճառագայթս արեգական¹³:*

Գեղարվեստական նման աստիճանի մի շարք տողեր կան թե՛ Սյունեցու «Ադամգրքում» և թե՛ միջնադարյան այլ հեղինակների գործերում:

Դրախտի գեղեցկությունը նրանց համար ծաղիկների գեղեցկությունն է, որովհետև ծաղիկները ևս ելնում են հողից:

Միանգամայն այլ է դրախտի Բսահակյանի նկարագրությունը: Միջնադարյան դրախտը եթե հանգում էր Ադամի հողային բնությանը, ապա Բսահակյանի նկարագրած դրախտը հանգում էր Լիլիթի հրեղենությանը: Միջնադարյան պատկերներում գեղեցկությունները հողից էին ելնում, իսկ Բսահակյանի «Լիլիթում» ծաղիկների գեղեցկությունն ավելի շքեղ պացքով ունեն թիթեռները: Պատահական չէ, որ Ադամը երբ ծաղիկներ է ցանկանում նվիրել Լիլիթին, վերջինս ասում է. «Բռնիր այս թռչող ծաղիկը ինձ համար», որին ի պատասխան Ադամն ասում է. «Սա թիթեռ է, ծաղիկ չէ» (էջ 184):

Միջնադարյան ստեղծագործությունների դրախտի ուրիշն իսկ հողեղեն է: Այն հանդարտ ծփում է: «Լիլիթի» դրախտը հրեղեն մի ընթացքի մեջ է՝ դրախտի մինչ այդ չհանդիպող շլացուցիչ պատկերներով. «Լեռների ոտների տակ սնդուսի ծովն էր հնում, ուր լուսափետուր որորները քնքշորեն խփում էին իրենց կուրծքը ոսկեծայր կոհակներին և սուրում էին դեպի

¹² Առաքել Սիւնեցի, Ադամգիրք, աշխտ. Շ. Միրզոյանի, Ա. Մադոյանի, Երևան, 1989, էջ 14:

¹³ Նույն տեղում, էջ 80:

հեռավոր զմրուխտաշող կղզիները: Այնտեղ երփնարթերթ ծաղիկներն էին խնկում, և բարձրուղեշ արմավենիներն էին օրորվում գուրգուրող հովերի մեջ» (էջ 187): Նման մի շարք պատկերներ կան այս ստեղծագործության մեջ:

Իսահակյանի լեզենդի գեղարվեստական շքեղ շարադրանքը թեև վերացարկված ընդհանրացումներով, սակայն շարունակում է հարաբերվել հին ավանդության, Աստվածաշնչի «Ծննդոց գրքի» և միջնադարյան մեկնությունների հետ, որոնցում Ադամից ու նրա կնոջից հետո հիշվող կերպար-հասկացություններն են դրախտի պտուղը, օձը և սատանան, որոնց Իսահակյանը ավելացրել է նաև կատվին:

Առաքել Սյունեցին անդրադառնալով այն հարցին, որ եթե Արարչագործության բարձրակետը Ադամն էր, Աստված ինչու նրան ստեղծեց հողից և ոչ թե լուսեղեն նյութից, գրում է, որ թեև հողից ստեղծեց, բայց «պատկերին ըզմեզ պատուեաց»: Այսինքն Ադամին թեև հողից ստեղծեց, սակայն ստեղծեց Իր պատկերով, որն ավելին է, քան լույսից կամ որևէ այլ նյութից ստեղծված լինելը¹⁴:

Նույն այս հարցարդումը բառացիորեն գտնում ենք Իսահակյանի մոտ: Եվան Ադամին երբ հարցնում է, թե Աստված իրենց ինչից ստեղծեց, նա պատասխանում է.

-Հողից, բայց Իր պատկերի նման (էջ 185):

Այս և հաջորդող զուգահեռները ցույց են տալիս, որ 1921թ. Վենետիկում «Լիլիթը» գրելիս Իսահակյանը քաջաճանաթ է եղել Առաքել Սյունեցու «Ադամգրքի» Վենետիկի Մխիթարյան հայրերից Մ. Պոտուրյանի հրատարակությանը, որը Վենետիկում լույս է տեսել 1907թ.:

Օձի գաղթակցում-դրախտի պտղի ճաշակում-դրախտից վտարում ընթացքը «Լիլիթում» շրջափոխվել է որպես պտղի ճաշակում-օձին տենչալ-սատանայի հետ դրախտից երկիր գնալ: Ըստ այսմ, ավանդական հասկացությունները մեկնաբանված են ոչ թե հողեղեն ու անօգնական Ադամի ու Եվայի խաբվելու, այլ հրեղեն Լիլիթի անձնիշխանական կամքի սլացքի տեսանկյունից:

Ադամը երկիրն անվանում է «չոր և տատասկոտ» (էջ 191): Լեզենդում երկրին տրված ևս երկու բնորոշում կա: Լիլիթին որոնող Ադամը հասնում է դրախտի սահմանին, որտեղից այն կողմ ծավալվում էր «ամայի և խուպան երկիրը» (էջ 198): Երրորդ բնորոշումը տրվում է դրախտի ցանկապատին Լիլիթին տեսնելիս. «Տատասկոտ և մռայլ երկրի կողմից»:

Երկրին տրված այս երեք բնորոշումներն ուղղակիորեն կապվում են դրախտից արտաքսման ու աստվածային անեծքի հետևյալ խոսքերի հետ.

¹⁴ Առաքել Սյունեցի, Ադամգիրք, էջ 106:

«Անիծեալ լիցի երկիր ի գործս քո» (Օսնդ. Գ 17), «Փուշ և տատասկ բուսուսցե քեզ» (Գ 17), «Եւ եհան արձակեաց գնա Տէր Աստուած ի դրախտէ անտի փափկութեան՝ գործել զերկիր ուստի առաւ» (Գ 23-24):

«Լիլիթում» շարունակ շեշտվում է երկրի չոր լինելը, որպես հակադրությունը դրախտի «փափկութեան»:

Լիլիթի՝ Ադամի «հրազեղուն» խոսքերն ընդհատող հաջորդ հարցումը վերաբերում էր սատանային: Լիլիթը նախ հարցնում է, թե ով է ապրում «երկրի վրա», որին ի պատասխան Ադամն ասում է. «Սատանան է ապրում»: Նա այսպես է պատասխանում համահունչ միջնադարյան այն ըմբռնմանը, որ սատանան աշխարհի իշխանն է: Այս ըմբռնումն իր հերթին գալիս է Քրիստոսի անապատում փորձությունից, երբ սատանան Փրկչին խոստանում է աշխարհի իշխանությունը, որից ենթադրվում է, որ նա աշխարհի իշխանն էր, այլապես չէր կարող խոստանալ աշխարհի իշխանությունը:

Լսելով սատանայի անունը, Լիլիթը իսկույն հարցնում է, թե ով է նա: Ադամը հետևյալ պատասխանն է տալիս.

-Աստծու հակառակորդն է նա: Հրեշտակ էր նա, հրեղեն, և՛ իմաստուն, և՛ գեղեցիկ, սակայն ըմբոստացավ Աստծու դեմ. Ուզեց Նրան հավասարվել: Եվ Աստված պատժեց նրան: Երկնքից ներքև թռթափեց նրան իր ընկերներով՝ հավիտյան նգովելով նրանց: Եվ թող նգովվա՛ծ լինեն նրանք (Էջ 192):

Այս պատասխանում խտացված են հրեշտակաբանության շրջանակում սատանայի մասին եղած ըմբռնումները: Համաձայն միջնադարյան խորհրդաբանության հրեշտակների դասը սկզբնապես իննի փոխարեն տասն է եղել: Ամենաբարձր տասներորդ դասը եղել են Մադայելը և Բելիարը՝ սատանայի մարմնավորումները, որոնք չարությամբ լցված ցանկացել են ոչ թե օրհնաբանել Տիրոջը, այլ հավասարակից դառնալ և ապստամբել են: Աստծո հրամանով Գաբրիել ու Միքայել հրեշտակապետերը հրեշտակների իննը դասերի հետ միասին կռվելով նրանց վար են նետել. «Հարին գնոսա և ի վայր տուին, որպես զկարկուտ ի յամպէն»¹⁵:

Այսպես է ասվում «Պատմութիւն ստեղծման եւ յանցմանն Ադամայ» գործում, որը գտնվում է Հին Կտակարանի պարականոնների գրքում: Այն 1896թ. լույս է տեսել Ս. Ղազարում: Անհնարին է, որ Իսահակյանը ծանոթ

¹⁵ Թանգարան հին և նոր նախնեաց. Ա, Անկանոն գիրք Հին Կտակարանաց, Ս. Ղազար, 1896, էջ 307:

չլինեն այս հրատարակությանը, ուր Ադամի և Եվայի մասին պարականոնների հայերեն թարգմանություններն են գետեղված:

Իսահակյանի վկայակոչած պատմությունը սատանային վար նետելու մասին, քանիցս հիշվում է նաև «Ադամգրքում»՝ այն շեշտադրմամբ, որ Ադամով պետք է լրացվեր հրեշտակների դասի տասը լինելը, որի համար սատանան օձի միջոցով գայթակղեց Ադամին, որ նա դրախտից երկինք ելնելու փոխարեն արտաքսվի երկիր: «Ադամգրքում» ապստամբած հրեշտակների վար նետվելու մասին ասվում է.

***Ջի ի լուսոյ հրեշտակք ստեղծան,
Հըպարտացեալ յերկնից անկան¹⁶:***

Լեգենդի մշակման վերջում Աստվածաշնչային պատմությունը որոշակիորեն ձևափոխություն է կրում Լիլիթի դրախտից փախչելով ու Եվայի ստեղծմամբ:

Ադամին վերաբերող պարականոններում նա շարունակ հիշում է դրախտը և այն ավելի դրախտային ու գեղեցիկ է պատկերացնում, ինչպես որ «Ադամգրքում» ողբալով ասում է.

***Այն ինչ բուրումն անուշալի,
Որ ի դրախտէն միշտ կու բուրի,
Հոգիս բաղձայ, սիրտըս ճըմլի,
Յանուշ հոտոյն միտքըս ցընդի¹⁷:***

Նույն ձևով Ադամին «իր տեսիլների մեջ Լիլիթն ավելի ցանկալի էր ներկայանում, ավելի ցանկալի և աննվաճ փափագելի» (էջ 198):

Ադամը ողբում է Լիլիթի համար, որպես կորցրած դրախտի: Միջնադարում տարածված էին «Ողբ Ադամայ ի վերայ դրախտին» անվանվող չափածո ստեղծագործությունները: Դրախտը կորցնելու համար Ադամը ողբալով ասում է.

***Վա՛յ որ յանճառ կենացն ելայ,
Վա՛յ որ դրախտէն արտաքսեցայ.
Վա՛յ որ յայս չար երկիրս անկայ,
Վա՛յ և եղուկ յազգիս վերայ¹⁸:***

«Լիլիթի» Ադամը ևս ողբում է իր կորցրած դրախտի համար. «Եվ գլուխն առած ափերի մեջ՝ ողբում էր իր տառապալից վիճակը և խորհում էր այրող հուշերով Լիլիթի անմոռաց և խուսափուն հրապույրների մասին» (էջ 198):

¹⁶ Առաքել Միսնեցի, Ադամգիրք, էջ 105:

¹⁷ Առաքել Մյունեցի, Ադամգիրք, էջ 80:

¹⁸ Նույն տեղում, էջ 33:

Ադամի դրախտից վտարվելուց հետո, տարբեր իրավիճակներում շարունակ դրախտը հիշեցնելը Բսահակյանի մոտ վերափոխված ներկայացնում է Ադամի ամեն իրավիճակում Լիլիթին հիշելը:

Լիլիթի՝ սատանայի հետ փախչելուց հետո կատարվում է «դարձ ի շրջանս իւր»: Գործողությունները նորից սկսվում են այն պահից, երբ Աստված ասում է. «Ոչ է բարուք մարդոյդ միայն լինել, արասցուք դմա օգնական ըստ դմա» (Բ 18-19):

«Լիլիթում» ևս «Աստծուն լսելի եղան Ադամի հառաչանքները, կարեկցեց նրան» (էջ 199):

Հարազատորեն է նկարագրված նաև Ադամի կողից Եվայի ստեղծումը: Աստվածաշնչում ասվում է. «Եւ արկ Տէր Աստուած թմրութիւն ի վերայ Ադամայ, եւ ննջեաց. Եւ առ մի կողից նորա եւ ելից ընդ այնր մարմին» (Բ 21-22): «Լիլիթում» ասվում է. «Եվ թմրություն բերեց Ադամի վրա և նրա կողից ստեղծեց մի ընկեր՝ Եվային»:

Սատանայի հետ փախչող Լիլիթը դրախտից տանում է Եվայի բացասական հատկանիշը՝ օձից գայթակղվելը: Բսահակյանը դրախտի կնոջ կերպարը երկատել է Լիլիթին տալով կանացի գեղեցկության անհասանելիության և կանացի գայթակղության գծերը, իսկ ընտանեկան նվիրվածությունն ու հավատարմությունը թողնելով Եվային¹⁹:

«Ծննդոց գրքում» ասվում է, որ Աստված Ադամին հանեց և բնակեցրեց դրախտին հանդիման. «Եհան գԱդամ և բնակեցոյց յանդիման դրախտին փափկութեան» (Գ 24):

Ադամին նվիրված պարականոններում ասվում է, որ նա երկիր մշակելիս մահացավ դրախտի կարոտով և խնդրեց, որ իրեն ամփոփեն դրախտի դիմաց: Լեզենդում ևս Ադամը ապրում և վախճանվում է իր դրախտի՝ Լիլիթի, հանդեպ նման կարոտով. «Եվ ապրեց Ադամ՝ սպասելով ու տենչալով միշտ Լիլիթին, և մեռավ Ադամ՝ հառաչելով ու երազելով միմիայն Լիլիթին» (էջ 200):

Բսահակյանի Լիլիթի կողքին համաշխարհային գրականության մեջ իր տեղն ունի նաև Վարպետի ստեղծած Ադամի կերպարը՝ որպես կանացի հրեղեն բնույթի հողեղեն ու երկրային արտահայտություն: Տարբերություններն արտահայտվում են համեմատությունների միջոցով, և Ադամի երկրային հողեղեն բնությունն է, որ նման հիասքանչություն է հաղորդում Լիլիթին: Վերջինս նկատելիորեն խամրում է օձի ողորկ և

¹⁹ Լիլիթից հետո Եվայի արարմամբ «Ծննդոց գրքի» պատմության երկատման մասին տե՛ս նաև Դերիկյան Վ., «Լիլիթի» իսահակյանական վերամեկնաբանությունը՝ «Ավետիք Բսահակյան. Գիտական ընթերցումներ. 2011», Երևան, 2012, էջ 118-119:

վետովետուն մարմնի կողքին: Այնպես որ տառապած հոդեղեն մարդու կողքին է արտահայտվում Լիլիթի դիվային հմայքը:

«Լիլիթը» առանձնանում է ոչ միայն կանացի գեղեցկության և հոգեբանության ինքնատիպ պատկերմամբ, այլև նրանով, որ այն համադրումն է հին եբրայական հավատալիքների՝ ոչ թե որպես դիվական տանջող կերպարի, այլ սիրո հմայքով տանջող հրեղեն էակի ու եվրոպական գրականությունից եկող կախարդական Լիլիթի, որպես անիմանայի տենչանքներին ձգտող սիրո կանացի առեղծվածային էակի:

Կերպարային նման համաձուլվածքի Իսահակյանը հասել է «Լիլիթի» բնագրային ենթախորքում «Օճնոց գրքի» հին արևելյան հավատալիքների ու եվրոպական գրականության ավանդների միահյուսմամբ:

Ա. Մկրտումյան

Իսահակյանի «Լիլիթը» հին արևելյան գրույցների ու եվրոպական գրականության համատեքստում Ամփոփում

Հին դիցաբանական հավատալիքների ամենաբազմաշերտ և հակասական կերպարներից է Լիլիթը, ով համաշխարհային գրականության մեջ գրական մշակումների և վերամեկնաբանումների երկար ճանապարհ է անցել:

Հոդվածում Իսահակյանի «Լիլիթը» համեմատվում է Աստվածաշնչի «Օճնոց գրքի» Ադամի ու Եվայի պատմության, Լիլիթի մասին հին եբրայական ու ընդհանրապես արևելյան պարականոնների ու եվրոպական գրականության մեջ Լիլիթի կերպարի մեկնաբանությունների հետ:

Ցույց է տրվում, թե Իսահակյանը որ դեպքերում է հետևել իրեն նախորդող շրջանի ստեղծագործություններին և որ դեպքում է այս լեգենդին ու Լիլիթի կերպարին նոր մեկնաբանություն տվել:

Նշվում է, թե պատկերավորման ինչ նոր միջոցների է դիմել Իսահակյանը դրախտը և Լիլիթին պատկերելիս:

А. Мкртумян

Легенда Ав. Исаакяна “Лилит” в контексте древневосточных приданий и европейской литературы

Резюме

Лилит является одним из самых многослойных и противоречивых образов древних мифологических верований. Во всемирной литературе этот образ прошел длинный путь литературных обработок и толкований.

В статье легенда “Лилит” Исаакяна анализируется в сравнении с “Книгой Бытие” Библии, с историей Адама и Евы, с древнееврейскими и восточными апокрифами и с толкованием образа Лилит в европейской литературе.

Показано в каких случаях Исаакян следовал произведениям предыдущего его периода и когда давал новое истолкование легенде и образу Лилит.

Обсуждается вопрос о том к каким новым способам изображения рая и Лилит прибегает поэт в произведении.

A.MKRTUMYAN

Isahakyan’s “Lilit” in the Context of Ancient Eastern Legends and European Literature

Summary

Lilit is one of the most multilayered and contradictory figures among the ancient mythological beliefs that passed a long way of literary reviews and reinterpretations in the world literature.

In the article, Isahakyan’s “Lilit” is compared with the story of Adam and Eve in the “Book of Genesis” in the Bible, with the old Hebrew and eastern Apocrypha about Lilit in general, with the interpretations of Lilit’s figure in the European literature.

The article shows in what cases Isahakyan followed the works of the period prior to him and in which case he gave a new interpretation to this legend and Lilit’s figure.

It mentions what new imageries Isahakyan used in portraying Lilit and the paradise.